Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 399 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 2-ի N 289- Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՌՆԵՐ ԵՎ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հարևանությամբ մոմավառության մատուռների և դամբարանի կառուցումը: Հաշվի առնելով, որ տաճարի ներսում մոմավառության արդյունքում որմնանկարները կեղտոտվում և վնասվում են, խիստ անհրաժեշտություն է առաջացել առանձին մոմավառության մատուռներ կառուցելը: Դամբարանում են հանգրվանելու հայոց կաթողիկոսների աճյունները, որտեղ հավատացյալները հնարավորություն են ունենալու աղոթելու նրանց հիշատակի համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգթոն, Մենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955թ., գրանցման թիվ՝ 0486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաք Էջմիածին, ընագավառը՝ հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	2,055,291,870 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ քաղաք Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ՝ 04703401
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) մոմավառության մատուռների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ: Իրականացվում է 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 881,261,870 դրամի չափով. 2) մոմավառության մատուռների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման (HVAC) համակարգի տեղադրման աշխատանքներ: Իրականացվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 82,693,547 դրամի չափով. 3) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի ջրամեկուսացման աշխատանքներ: Իրականացվել է 2020 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում՝ 2,494,100 դրամի չափով՝ ա. ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 21,700,000 դրամ. 4) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի ջրամեկուսացման, կառավարվող կանգնակների և քարերի տեղադրման աշխատանքներ, մոմավաճառի համար նախատեսված տարածքի և տեխնիկական կառույցի ու հասարակական սանհանգույցների տանիքի ջրամեկուսացման, աշխատանքներ: Իրականացվելու է 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 35,000,000 դրամի չափով. 5) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի համար անհրաժեշտ գրանիտե քարերի մատակարարում: Իրականացվելու է 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 50,000,000 դրամի չափով. 6) մոմավառության մատուռների և դամբարանի հետին պարսպի շինարարական աշխատանքներ: Իրականացվել է 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 46,165,670 դրամի չափով. 7) պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ: Իրականացվել է 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 29,653,280 դրամի չափով.

		8) տեխնիկական կառույցի, հասարակական սանհանգույցների, մոմավաճառի համար նախատեսված տարածքի շինարարական աշխատանքներ, ներքին հարդարման անհրաժեշտ նյութերի մատակարարում: Իրականացվում է 2022 թվականի դեկտեմբերի 1-ից 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 150,000,000 դրամի չափով. 9) ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմոնտաժային աշխատանքներ, անհրաժեշտ նյութերի մատակարարում: Իրականացվում է 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 20,000,000 դրամի չափով. 10) մոմավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմոնտաժային աշխատանքներ: Իրականացվում է 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 21,000,000 դրամի չափով. 11) հաշմանդամների համար նախատեսված վերելակի ներմուծում: Իրականացվել է 2021 թվականի հոկտեմբերի 1-ից 2022 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 2,901,950 դրամի չափով. 12) լուսատուների ներմուծում՝ իրականացվել է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 37,036,543 դրամի չափով. 13) տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ: Իրականացվում է 2021 թվականի հունիսի 1-ից 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատ-վածում՝ 6,000,000 դրամի չափով. 14) մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ: Իրականացվում է 2022 թվականի օգոստոսի 1-ից 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 600,000,000 դրամի չափով. 15) մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքների համար ջրամեկուսիչ նյութերի մատակարարում: Ձեռք է բերվել 2024 թվականի օգոստոսի 12-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 27,384,910 դրամի չափով. 16) կահույքի (մոմավառության սեղաններ և նստարաններ) մատակարարում: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից 2025 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 42,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ	1) մոմավառության մատուռների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ՝ 881,261,870 դրամ առանց ԱԱՀ-ի.

	նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2) մոմավառության մատուռների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման (HVAC) համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 82,693,547 դրամ առանց ԱԱՀ-ի. 3) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի կանաչապատման աշխատանքներ (տանիքի ջրամեկուսացում և ջերմամեկուսացում)՝ 2,494,100 դրամ առանց ԱԱՀ-ի. ա. ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 21,700,000 դրամ. 4) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի ջրամեկուսացման, կառավարվող կանգնակների և քարերի տեղադրման աշխատանքներ, մոմավաճառի համար նախատեսված տարածքի և տեխնիկական կառույցի ու հասարակական սանգանգույցների տանիքի ջրամեկուսացման, աշխատանքներ՝ 35,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 5) մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի համար անհրաժեշտ գրանիտե քարերի մատակարարում՝ 50,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 6) մոմավառության մատուռների և դամբարանի հետին պարսպի շինարարական աշխատանքներ՝ 46,165,670 դրամ առանց ԱԱՀ-ի. 7) պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ՝ 29,653,030 դրամ առանց ԱԱՀ-ի. 8) տեխնիկական կառույցի, հասարակական սանհանգույցների, մոմավաճառի համար նախատեսված տարածքի շինարարական աշխատանքներ, ներքին հարդարման անհրաժեշտ նյութերի մատակարարում՝ 150,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 9) ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմոնտաժային աշխատանքներ, անհրաժեշտ նյութերի մատակարարում՝ 20,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 10) մոմավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմոնտաժային աշխատանքներ՝ 21,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 11) հաշմանդամների համար նախատեսված վերելակի ներմուծում՝ 2,901,950 դրամ առանց ԱԱՀ-ի. 12) լուսատուների ներմուծում՝ 37,036,543 դրամ առանց ԱԱՀ-ի. 13) տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 6,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 14) մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ, նյութերի մատակարարում՝ 600,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի.

		15) մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքների համար ջրամեկուսիչ նյութերի մատակարարում՝ 27,384,910 դրամ առանց ԱԱՀ-ի. 16) կահույքի (մոմավառության սեղաններ և նստարաններ) մատակարարում՝ 42,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Չի նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ